յիշում, եւ այսպիսով Արշակին ամէն կողմից թշնամիներից շրջապատուել տալով, շարունակում է. «Ապա տեսեալ Արշակայ, թէ թշնամի են նորա Շապուհ եւ Վաղէս եւ իւր նախարարքն, տարակուսեալ յամենեցունց՝ յղէ բազում անգամ աղաչելով զՄեծն Ներսէս. խոստանայր դառնալ յամենայն ճանապարհաց չարաց, եւ լինել ըստ կամաց նորա, եւ ապաշխարել ի քուրձ եւ ի մոխիր. միայն զի նա եկեսցէ, եւ արասցէ խաղաղութիւն, եւ թափեսցէ զնա ի ձեռաց հզօրացն Յունաց»։

Ո՞վ կարող է չհնազանդուիլ Ներսէս Մեծ Հայրապետի հայրական խրատներին։ Նա իսկոյն Արշակին եւ իւր նախարարներին հաշտեցնում է միմեանց հետ, «բայց ի նահապետէն Արծրունեաց Մերուժանայ եւ ի նորին քեռանէ Վահանայ Մամիկոնենէ», ասում է Խորենացին, «որք անլուռ եղեալ՝ ապստամբեալ գնացին առ Շապուհ»։ Սակայն այս վերջին տեղեկութիւնը Խորենացին վերցրել է Փաւստոսի պատմութիւնից (Դպր. Դ., գլ. իգ եւ ծ), Վահանին, որ Մեհրուժանի քեռին էր, նորա քեռայրը դարձնելով։ Ահա այս երկու ամբարիշտներն են միայն, որոնք յանդգնում են Ներսէս Մեծ Հայրապետի միջնորդութիւնը չյարգել։ «Բայց եւ առ զօրսն Յունաց երթեալ մեծին Ներսիսի», շարունակում է Խորենացին, «աղաչէր մի ինչ աշխարհիս մեղանչել, այլ առնուլ զհարկսն եւ զորդի Արշակայ զՊապ հանդերձ ամենայն նախարարացն որդւովք պատանդս, եւ դառնալ։ Որում լսող եղեալ քաղցր եւ մեծն Թէոդոս զօրավարն, դառնայ առ կայսրն հանդերձ պատանդօքն, ընդ իւր տանելով զմեծն Ներսէս թղթով Արշակայ եւ այլն»։ Որ այս բոլորը սուտ, հակապատմական եւ անկարելի բաներ են, դորա մասին ոչ ոք չէ կասկածում, բայց գլխաւորն այն է, որ սորանով ընթերցողի համար պարզւում է, թէ ինչ պատճառաւ Ներսէսը Խորենացու պատմութեան մէջ ժամանակակից է դուրս եկել Թէոդոսին։ Խորենացին դիտմամբ Ներսէս Մեծ Հայրապետին ժամանակակից է դուրս բերում Թէոդոս մեծ քրիստոնեայ զօրավարին, որպէս զի Ներսէսը հայրաբար նորան օրհնէ, իսկ նա որդիաբար նորան հնազանդուի, Ներսէսը նորա առաջ բարեխօսի, նորան կարեւոր բաների համար խնդրէ, իսկ Թէոդոսը որդիաբար նորան լսէ եւ նորա խնդիրը կատարէ առանց այլեւայլութեան։ Եւ իրաւ, Թէոդոս զօրավարը, չնայելով որ իւր կայսեր հրամանով զօրքով Հայաստան է եկել Արշակին պատժելու, այնքան յարգում է Ներսիսին, որ ինքնագլուխ, նոյն իսկ առանց իւր ինքնակալի կամքը հարցնելու, սեպհական պատասխանատուութեամբ իւր սուրը յետ է դարձնում Հայաստանից։ Արդէն մենք տեսանք (վերն եր. 87), որ Խորենացին նման բարեպաշտական գաղափարներով առաջնորդուելով, Յուսիկին ժամանակակից է հանդիսացնում Յուլիանոսին, որպէսզի միեւնոյն ժամանակ եկեղեցու քաջ նահատակ հանդիսացնէ։

Իսկ որ Արշակի թուղթն առ Վաղէս՝ Խորենացու երեւակայութեան արդիւնքն է, դորա մասին խօսել անգամ չ՚արժէ։ Նամակում յիշուած Արշակի խօսքերը, թէ «իբրեւ հզօրս ինչ զմեզ վարկանելով՝ արձակեցաք գունդ հինից յերկիրդ Յունաց», Խորենացին յօրինել է Փաւստոսի պատմութեան վերայ, (Դպր. Գ., գլ. ժա.) ուր պատմուում է, որ Արշակ թագաւորը լսելով, որ Վաղէս կայսրը Ներսիսին աքսորեց, «տայր հրաման Վասակայ իւրում զօրավարին զօր ժողովել, զգունդս (բո)վանդակել, ելանել հարկանել եւ աւար առնուլ զկողմանս Գամրաց։ Իսկ զօրավարն սպարապետն Վասակ... հարկանէր աւար առնոյր զկողմանս Գամրաց մինչեւ ի քաղաքն յԱնկուրացւոց...», իսկ մեր պատմաբանը նոյն իսկ արտագրելու մէջ այնքան անփոյթ է, որ այստեղ վերյիշեալ խօսքերը Արշակի բերանն է դնում, առանց նախորօք կամ գոնեայ յետոյ պատմելու, թէ Արշակ երբ, ինչ առթիւ գունդ ղրկեց Յունաց երկիրը աւերելու։

Իսկ Ներսէս Մեծի պատգամաւորուելու եւ աքսորուելու դժուար խնդրի մասին, այսինքն թէ նա ո՛ր աստիճանի պատմական կարող է համարուիլ, հետեւեալ անգամ կը խօսինք։

(Շարունակելի։) Ց. ԴԱՂԲԱՇԵԱՆ

## ՑՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԷՆ ՁԵՌԱԳՐԱՑ ՍԱՆԱՍԱՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ Ի ԿԱՐԻՆ

(Շարունակութիւն։)

### 20.

### ՄԱՇՏՈՑ

**Իբր ԺԶ—ԺԷ դարէն**

*ԹՈՒՂԹ 71, որից 7 անմացոյց. էջ չէ նշանակուած: — ՄԵԾՈՒԹԻՒՆ 17.5 սմ. երկ. 13 սմ. լայն. 3 սմ. հաստ: — ՆԻՒԹ՝ բամբակեայ թուղթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտ. առջեւի կողքին վրայինը չկայ: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն. իւրաքանչիւրը՝ 13.5×4 սմ: Մի-*

digitised by A.R.A.R.@

*ջին լուսանցք 1 սմ: — ՏՈՂ՝ 26: — ԳԻՐ՝ բոլորգիր: — ՍԿԶԲՆԱՑՈՂՆԵՐԸ եւ ՍԿԶԲՆԱՏԱՌՆԵՐԸ՝ կարմիր. ԴԱՏԱՐԿ թուղթ, ԶԱՐԴ եւ ԼՈՒՍԱՆՑԱԳՐՈՒԹԻՒՆ կամ ՅԻՇԱՏԱԿՈՒԹԻՒՆ չկայ: Ճակատը մէկ գլխազարդ՝ անմնապզեղ եւ անարուեստ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ ոչ շատ մաքուր. թուղթերը քիչ մը բորբոսած եւ հինցած. ետեւէն պակաս է, հետեւաբար գլխաւոր յիշատակարանն ալ կորսուած: Կազմողին կողմէ դրուած է երկու երեք թուղթ մագաղաթ պահպանակ՝ որոնցմէ երկուքը աւետարան. միւսը՝ անծանօթ:*

Ձեռագրին ժամանակը, գրիչը, ստացողը եւ այլն, անծանօթ են։

---

## 21.

### ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ

### ՌՃԼԸ = 1689։

*ԹՈՒՂԹ 25. էջ չէ նշանակուած: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 21 սմ. երկ. 10 սմ. լայն. 0.5 սմ. հաստ: — ԿԱԶՄ՝ չունի: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ երկսիւն. իւրաքանչիւրը՝ 15.5×4.5 սմ: Միջին լուսանցք 1.1: — ՏՈՂ՝ 20: — ԳԻՐ՝ խոշոր բոլորգիր: — ՍԿԶԲՆԱՏԱՌՆԵՐՆ եւ ՍԿԶԲՆԱՑՈՂՆԵՐԸ՝ կարմիր. ԳԼԽԱԶԱՐԴ մէկ ճակատը՝ ոչ շատ սիրուն. ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴ՝ 7: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ մաքուր: — ԴԱՏԱՐԿ թուղթ՝ 4 էջ: — ԳՐԻՉ՝ Գրիգոր երէց: — ԺԱՄԱՆԱԿ ՌՃԼԸ (= 1689):*

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ։ 1. 14 եւ 15 էջերուն վարի լուսանցքին վրայ նօտրագիր գրուած է “ի յարկի սրբութեան„ն ամբողջ։

2. 35 էջ՝ նօտրագիր. “տէրացու մարտիրոսին տէրացու աղլեմին տէրացին։„

3. 39 էջ՝ նոր գրով. “այս յիշատակ է եկեղեցի սու ըր նըշանին յիշատակեցի։„

4. Աղօթքներուն վերջը՝ “գրեցաւ փրկական սուրբ խորհուրդս ձեռամբ գրիգոր երիցու թվին ՌՃԼԸ։„

5. Վերջին թերթ էջին վրայ՝ “յիշատակ է խորհրդատետրս թուրքմանին զօհրային որդոյն ամսահին յարութենին երանոյին ստացուած զիւրեան յիշատակն ի խաղաղութիւն պահէ մտան հարիւրապատիկ եւ հազարապատիկ պարգեւէ սոցա եւ ի հանդերձեալն ամէն հայր մեր որ։ եւ եսուեն ի ձեռս Տէր եղիին։„

Տակը կնիք մը “Քրիստոսի ծառայ Պետրոս ՌՃՀԲ (= 1723)։„

---

## 22.

### ՀԻՆ ԿՏԱԿԱՐԱՆ

### ԺԱ—ԺԲ դարէն։

*ԹՈՒՂԹ 183. էջ՝ չէ նշանակուած: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 26 սմ. երկ. 17 սմ. լայն. 4 սմ. հաստ: — ԿԱԶՄ՝ չունի: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ անսիւն. բաւական խառնակ: — ԳԻՐ՝ փոքր երկաթագիր. թանաքը սեւ կարմրորակ: — ՏՈՂ՝ 25: — ԴԱՏԱՐԿ թուղթ չկայ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ շատ աղտոտած, հինցած. վերջի մասերը՝ բորբոսած, գիրերն եղծած, անընթեռնլի:*

Գրքին սկիզբէն եւ վերջէն շատ պակաս է. կը սկսի Ծննդոց Լ գլխէն “Եւ ասէ Ռաքէլ եթէ ոչ...„ եւ կը հասնի մինչեւ Թուոց ԺԱ, 33 “Տէր բարկացաւ ժողովրդեանն...։„ Լուսանցքներու վրայ ալ եւ ոչ մէկ յիշատակութիւն կայ. գլուխներն չէ նշանակուած. քանի մը գլուխ միայն նշանակուած է այսպէս “Թւ ԼԲ խգ։„ Այս երեք չորս գլխակարգութիւնները՝ լուսանցքի վրայ ուրիշ են, որովհետեւ գրերը եւ թանաքը տարբեր են։ Ուստի ձեռագրին ոչ թուականը յայտնի է, ոչ գրիչը, ոչ ստացողը եւ ոչ ալ տեղը։

Ձեռագրին մէջ 3 հատ ալ պատկեր կայ շատ ագեղ. մին լուսանցազարդ Ելից սկիզբը եւ միւս երկուքը գլխազարդ. մին Ղեւտացւոց եւ միւսը Թուոց սկիզբը։

---

## 23.

### ՍԱՂՄՈՍ

### ԺԵ — ԺԶ դար։

*ԹՈՒՂԹ 202. էջ չէ նշանակուած: — ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 15 սմ. երկ. 9.5 սմ. լայն. 4.5 սմ. հաստ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտ: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ բաւական մաքուր: — ԳԻՐ՝ խոշոր բոլորգիր: — ՍԿԶԲՆԱՏԱՌՆԵՐՆ ու ՍԿԶԲՆԱՑՈՂՆԵՐԸ կարմիր, կանաչ, կապոյտ. զարդարուն գրեր. 5 տեղ ԳԼԽԱԶԱՐԴ, ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴՆԵՐԸ ջնջուած են, որովհետեւ կազմողը լուսանցքները կտրած է: — ՏՈՂ 17: — ԴԱՏԱՐԿ թուղթ եւ տառախալ չկայ. սկիզբէն եւ վերջէն քիչ պակաս. յիշատակարանը կորսուած է. լուսանցագրութիւն ալ չկայ. միայն մէկ տեղ գլխու մը տակ քանի մը տող առաջին գրողէն: “Ըստացող տառիս. զսրբասէր Կ. Գացաղացա. եւ զբազմամեղ՝ գրչիս աստուածատուր քահանայս աղաչեմ յիշել ի Տէր։„ — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԳՐԻՉ՝ Աստուածատուր քահանայ: — ԹՈՒԱԿԱՆ եւն անծանօթ:*

---

## 24.

### ՔԱՐՈԶԸՆԳԻՐՔ ԳՐ. ՏԱԹԵՒԱՑՒՈՅ

### ՌՃՁԹ = 1740։

*ԹՈՒՂԹ 416. էջ 812: — ՄԵԾՈՒԹԻՒՆ 25 սմ. երկ. 20 սմ. լայն. 5.5 սմ. հաստ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտ: — ՆԻՒԹ՝ թուղթ: — ԳՐՈՒԹԻՒՆ երկսիւն՝ իւրաքանչիւրը 19.5×7 սմ. միջին լուսանցք 1 սմ: — ՏՈՂ 36: — ԳԻՐ՝ մանր նոտր. ՍԿԶԲՆԱՏԱՌ եւ ՍԿԶԲՆԱՑՈՂ կարմիր, անզարդ: — ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴ, ՊԱՏԿԵՐ եւն չկայ: — ԴԱՏԱՐԿ թուղթ 9 էջ. 3 էջ եւս դատարկ, բայց քանի մը տողեր գրուած յետոյ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ մաքուր. պակաս, ջնջեալ եւն չկայ: — ԳՐԻՉ չէ յիշուած: — ՏԵՂ նոյնպէս: — ԺԱՄԱՆԱԿ յիշատակարանին մէջ ՌՃՁԹ Դեկտ. 10, իսկ գրքին սկիզբը 1773 Սեպտ. 9:*

Ստացուած է Քարոզգրքէ Գր. Տաթեւացւոյ։ Սկզբան վերջ թուղթը այլեւայլ ժամանակներ գրուած կտորներ աւելցուած են։ Բովանդակութիւնն է.

1. Սկիզբէն 4 էջ դատարկ, որոնց երրորդին վրայ՝ օտար գրչէ “ստացեալ է մովսէս մարգարէն թէ„ “մարկոս կիրակոս մարտիրոս„ “այս է աէփանի թիւը ՌՃԽԱին տղայ եղաւ. Աստուած բարի վայելեցնէ ամէն. այս է օղլիպայի թիւն ՌՄԽին տղայ էղավ ամէն։„

2. Հինգերորդ էջը. “Գիրք քարոզութեան. որ կոչի. Ձմեռան հատոր. Արարեալ սրբոյ Հօրն մերոյ Գրիգորի Տաթեւացւոյն։ Գաղափարեցեալ

digitised by A.R.A.R.@

օգնականութեամբ Սրբոց Առաքելոցն Թադէոսի եւ Բարդուղիմէոսի. եւ Սրբոյն Գրիգորի մերոյ լուսաւորչին։ Յամի Տեառն 1773։ յամսեանն Սեպտեմբերի։ Թ։"

3. Էջ 6 եւ 7 նախերգանք։

4. Էջ 8 դատարկ։

5. Էջ 9—11 "Յանկ գլխոց սրբոյ մատենիս" որուն վերջը՝ "մարգար առաքել ավէտիս գաբրել գաբրել մըքէլ" օտար գրչէ։

6. Էջ 12—14 դատարկ։ (Մինչեւ հոս էջ չէ նշանակուած։)

7. Էջ 1-812 կը սկսի բուն գիրքը առանց լուսանցազարդութեան։

8. Ի վերջոյ 1 էջ դատարկ, 2 էջ պատմութիւններ. "Թագաւոր ամե բարեպաշտ...", "մարթ մի էր ի քաղաքի...", եւ յիշատակութիւն մը" Թվին ՌՄԽԼին Նոյեմբերի 22ին օրն երկուշաբթի աշխարհ եկաւ տէր արութնի որդի Թօմաան Աստուած երկար կեանս պարգեւեսցէ ամէն։" Յետոյ 3 էջ դատարկ։

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ։ Գծագրուած յիշատակարան. "Փառք պատիւ եւ գոհութիւն ամենասուրբ երրորդութեան Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, որ իւրով առատ մարդասիրութեամբն եւ գթութեամբն ետ կարողութիւն անարժանութեան մերում յանկ հանել, զպատուական եւ զհոգեշահ մատեանս զայս ի փառս իւրոյ մեծութեանն եւ բարերարութեանն, եւ ի յօգուտ մանկանց եկեղեցւոյ եւ ի պարծանս ազգիս Հայոց։ Ես եղեւ Աւարտ սորին ի թուին Հայոց։ ՌՃՁԹ. ի դեկտեմբերի 10։

Ի Հայրապետութեան լուսաւորչաց մեծի եւ անպարտելի Աթոռոյն Սրբոյ Էջմիածնի Տեառն Ղազարու գերընտիր եւ երջանիկ եւ Աստուածային Կաթուղիկոսին։ Ես երկուց սրբազան պատրիարգաց Սրբոյն Երուսաղէմի, եւ Կոստանդնուպոլսոյ, Տեառն Գրիգորի. եւ Տեառն Յօհաննիսի Աստուածային վարդապետացն։"

## 25.

### ՎԱՐՔ ՀԱՐԱՆՑ

### ՌՀԳ = 1624էն առաջ։

*ԹՈՒՂԹ 176. էջ՝ չէ նշանակուած: – ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 21 սմ. երկ. 15 սմ. լայն. 5 սմ. հաստ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտէ: – ՆԻՒԹ՝ թուղթ. սկիզբը երկու թուղթ մագաղաթ երկաթագիր աւետարանի մնացորդ՝ կազմողին կողմէ: – ԳՐՈՒԹԻՒՆ՝ միջին բոլորգիր, իսկ վերջի 47 թուղթերը խոշոր բոլորգիր: – ՏՈՂ՝ 24. վերջի մասը 23: – ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ մաքուր. տառասխալ քիչ: – ՊԱՏԿԵՐ սկիզբը "Հայր յանտոն" շատ տգեղ. մէկ ԳԼԽԱԶԱՐԴ եւ մէկ ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴ, ԴԱՏԱՐԿ թուղթ՝ սկիզբէն եւ վերջէն մէկ էջ՝ յետոյ այլեւայլ գրութիւններ, մէջէն 2 էջ բոլորովին դատարկ: – ՎԵՐՆԱԳԻՐՆԵՐԸ կարմիր մելանով են: – ԳՐԻՉ եւն անծանօթ: – ԺԱՄԱՆԱԿ չէ յիշուած, բայց ՌՀԳէն առաջ:*

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ։ Երկու թուղթ մագաղաթին ետեւ առաջին էջէն յետոյ գրուած. "ի վայելումն Տէր կարապետին Աստուած բարի վայելումն տացէ. Ամէն. ի թուղյս մերոյ ՌՀԳին. էս փարն բռ. ղուշ. հասաւ էսին աղէն իպլու աղէն. ճ. ղուշ. հասաւ խավաղ. ճ. ղուշ. 3 էլ մէկ հասաւ լիլօի դատաօ էդ գնծ, ղուշու, գինէ ի վայելումն տէր կարապետին բարի վայելումն տացէ. Ամէն ի թուղյս մերոյ ՌՀԳին. յայտ լիցի յետ հաֆացին տէր... ամառ ուրախբէր ուսուֆիյա գլխու լճէն. մինչեւ հաճի սինանի էգին գնծ. ղուշ. բճծ. ղուշ. էլ ակուի. գաւիմէն է փարայ մէ...ճ. ղուշ. ի մօլէն սարաւ մէքցլէ որմնն տէր տաւրաւ մեր յօվան ճ. ղուշ. թօլիմ ձեռօք խավաղին հ. ղուշ. հաւն աղի ձեռօք փանկօ իմ հանին։"

Իսկ վերջին էջը օտար "Թվին ռճղբ. (= 1748) որ սամ ամի այնքան սղութիւն եղեւ որ քլ. ցրեն. իե. ղուշ. հին ըստակ եղեւ գրեթէ հայոց ազգն ի սպառ սովալլուկ եղեալ յուշընչացան եւ սամ ամի դեկտո"բէրի յելն գիտաւոր եւ տրանւոր սաստ մի երեւեցաւ ապա Տեառն Աստուծոյ է գիտելի օրհնել է տէր ի պարգեւս իւր ի մեզաց նէ եւ ի յանօգա գնացից փառք Աստուծոյ։"

## 26.

### ԵՍԱՅԻ ԵՒ ԹՈՒՂԹ ՊՕՂՈՍԻ

### ՊԼ = 1381 + ։

*ԹՈՒՂԹ 134+201 = 335. էջ չէ նշանակուած: – ՄԵԾՈՒԹԻՒՆ՝ 16 սմ. երկ. 11.5 սմ. լայն. 7 սմ. լայն: – ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտ: – ՆԻՒԹ՝ առաջին մասը թուղթ եւ երկրորդը շատ նուրբ մագաղաթ սպիտակ: – ԳՐՈՒԹԻՒՆ՝ միջին բոլորգիր. երկսիւն՝ իւրաքանչիւրը 12×3.5 սմ. միջին լուսանցք 0.7 սմ: – ՍԿԶԲՆԱՏԱՌ եւ ՍԿԶԲՆԱՏՈՂ՝ կարմիր: – ՏՈՂ՝ 22: – ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ մաքուր: – ԴԱՏԱՐԿ թուղթ 4+1, 2+1 գրուած վերջէն: – ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴ 21+72: – ԳԼԽԱԶԱՐԴ 2+2. առաջինները բաւական լաւ. իսկ միւսները՝ տգեղ եւ միագոյն: – ԺԱՄԱՆԱԿ՝ առաջինին ՊԼ = 1381: – ԳՐԻՉ՝ Տաւներ. իսկ երկրորդին՝ անծանօթ: – ՏԷՐ՝ Մկրտիչ փականկալ:*

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ։ 1. Առաջին չորս թուղթերը՝ տօմարական գիտելիք, երեք թուղթ ցանկ որու տակ գրուած է. "Այս մատեանս մեր արդեամբք կը նուիրեմք ի յիշատակ բարեհամբաւ Սանասարեան Ազգային Դպրոցին Կարնոյ. Ղազարոս Վ. Հանճեան. Ներսէս քահանայ Վ. Հանճեան կարնեցի. 1 յունվարի 1895։"

2. Մէկ էջ տաղ Եսայի մարգարէի վրայ։ — "Ցէէն յէացեալս յաւիտեան գոչէ հոգւոյն եսայի, տէր խաւսեցաւ առէ բան աւհեղ եւ զարմանալի, զարմացմամբ եղեալ գոյից սա պատուէր եւ դքանչելի, այն որ շարժէ զերկինս զարդիւքն շուրջանակի, պար առեալ բղխէ բան եւ մեծվայելչութիւն յերկրի, յորս բնութեան սահման հրաշիւք ի մի հեռաւի, լուր երկին ու ունկն դիր երկիր քանզի այս իսկ է հրաշալի, որ քան զբնութիւն է գերազանցեալ այլ իմն երեւի, զի եզն որ լծով եկեալ ի ձեռաց մարդկան տառապի, եւ յամր եւ յիմարն ասեմ յանասնոց էշն կենդանի. ծանեան ըզստածոզս իւրեանց հնազանդել մարոյն յերկրի, եւ զիս ոչ ծանեաւ զոր ծնայ եւ բարձրացուցի. եւ փեր ի վերոյ տարեալ ի յերկինս երկնից հասուցի, յորմէ զամենայն բարութիւն տեղեայ սա տարածեցի, եւ զաստի բնաւ սանդեալն ընդ իշխանութեամբ կացուցի։"

digitised by A.R.A.R.@

3. Գրքին մէջ սա յիշատակարանը. "Արդ որք հանդիպիք այսմ տառիս ի կարդալ եւ կամ յաւրինակ. յիշեսջիք ի մաքուր աղաւթս ձեր զմկրտիչ քահանայն փակակալն զծնաւղս իւր զի ի հալալ արդեանց իւրոց. ետ զսա գրել յիշատակ իւր եւ ծնաւղաց իւրոց: եւ Աստուած զձեզ յիշէ յիւր միւ: Եւ զիս զմեղաւորս մոռանալ ոգի: զփցուն գրիչս: որ չեմ արժան այսմ գործոյ յիշման արարէք զիս արժանի: միթէ տէրն ողորմեսցէ:"

4. Գրքին վերջն ուրիշ մը. "Փառք միայնում ի սկզբանէ հնար արկեալն իրագործութեանց որդւոյ եւ գերակատարն յանգամանաց հոգւոյն: որ զաւրացոյց զտկարութիւն մեր, ի հանգ աւարտել զհոգեպատում բանս երգարանիս մեծահաւատ մարգարէին Դաւթի: բայց գրեցաւ սա ի դուռն սուրբ զամբարանի որդոյն գրիգորի լուսաւորչին: եւ սաղիմս սուրբ նշանին: եւ սուրբ աստուածածնին: եւ սուրբ կարապետին: ի թվին հայկազեանս սեռի: ՊԼ. (= 1381) Իսկ ըստ Հ. իցն յաղագս ի մեղաւ ամք. վաճթ: եւ ըստ հրէիցն Նծգ. ըստ երրայեցւոյն. չծգ: Անդրէաս սարոյ մինչեւ ի ծնունդն քրիստոսի, բու: եւ մինչեւ ի մեր թուականն հասանելոյ: գՃծդ: յորում թժ. երեակք եւ Է. երեակք շրջանք եւ շարժմունք ժամանակաց. առեալ զինչանկլով աւարտին: Եւ ի քրիստոսի մարմնաւորութենէն առ մեզ ամզգ (= 1296): Արդ որ աւգտիք եւ վայելէք յուսով յաստուածային մատեանս: Ո՜վ վսեմանեմ երանք, աստուածասէր խմբից: յիշես անկեալ աղաչեմ: մեղաց թողութիւն հայցեցէք յաստուծոյ: շնորհազարդ ծերունեայն միրտիչ փակակալին: զի ջերմեռանդ սիրով: եւ քաջ հաւատով ետ զսա գրել: յի. (հոս երեք տող կորուած) թի. մեղաց իւրոց, եւ ննջեցելոց իւրեանց: Այլ եւ զիմ նուաստութիւնս աղաչեմ յիշել թողութիւն յանցանաց մեռեալ ոգւոյս եւ չարաչար եւ ալեկոծեալ միտս. անարժան գծողիս տառինքս: նա եւ զծնողսն մեր. եւ զուսուցիչն իմ. զհոգեւոր հայրն. զիմաստունն. եւ զհանճարեղն. զտէր Կիրակոսն: եւ Աստուած զձեզ յիշէ:"

Երկրորդ մասն ունի ցանկ, նախադրութիւն, Պօղոսի ամբողջ Թուղթերը (նաեւ Գ. Կորնթացւոց). յետոյ յիշատակարան մը եւ անկէ վերջը Պօղոսի [illegible] մէկ օրինակ, եւ քանի մ' Աւետարաններ եւ Հետեւեալը. "Գրեցի եւ կարգեցի ըստ կարի տկարութեան զգիրքս պաւղոսի առաքելոյ յաւրինեալ եւ դիւրահաս ընթերցուածովք եղբարց մերոց. յորոց յամենեցունց զմեղադրութիւն յանդգնութեանս իմում հայցեմ: զի աղաւթիւք որ վասն մեր լինիցին բարեխաւսելով ձեր ըստ իս ընդունիցիմ: Ընդաւրինակեցան գիրքս այս ընդ հնաբաւոր աւրինակաց՝ որ կան յարկեղս գրոց սրբոյն պամփիլեայ իւրովք ձեռաւք գրեալ: Թեյադրութիւն. Գլխաւոր իմ եւ աստուածաեղէն կրաւնիցն վարդապետս: Եթէ ունիք զիս յանաւթ տայցես ազնիւ աւրինակ փոխանակ ընդ իմ առնուցուս. զի հատուցանաւղքն չարք են: Պատասխանի: Գանձ ունիմ զքեզ հոգեւոր բարութեանց եւ ամենայն մարդկան ցանկալի: յաւրինուածովք եւ պէսպէս զարդուք զարդարեալ: այս սակս ճշմարտութեանց: Ոչ տաց զքեզ վայրապար ումեք յանաւթ: եւ ոչ դարձեալ նախանձեցայց ընդ աւգուտ ուրուք, այլ յորժամ տաց ըզքեզ յանաւթ՝ սիրելեաց իմոց՝ ազնիւ աւրինակ փոխանակ առից:"

Գրքին վերջին էջը՝ յետոյ գրուած է. "մարտիանոս, մաղքիմոս, մաքսիմիանոս ամբիքոս դինէսիոս կոստանդիանոս, եւ յոհանէս, բրխուբ. սուրբ Անծնիններ Է. մանկը եփեսէսի հօր եւ:"

---

## 27.

### ՍԱՂՄՈՍ

### ՋԽԴ = 1495.

*ԹՈՒՂԹ 238. էջ չէ նշանակուած: — ՄԵԾՈՒԹԻՒՆ 26 սմ. երկ. լայն. 10 սմ. հաստ: — ՆԻՒԹ՝ խիստ շատ հաստ մագաղաթ: — ԿԱԶՄ՝ կաշեպատ փայտէ: — ԳՐՈՒԹԻՒՆ՝ խոշոր բոլորգիր: — ՏՈՂ՝ 23: — ՍԿԶԲՆԱՏԱՌ, ՍԿԶԲՆԱՏՈՂ եւ ՎԵՐՆԱԳԻՐ՝ կարմիր կապոյտ, կանաչ: — ՀԱՆԳԱՄԱՆՔ՝ մաքուր. տառասխալ՝ քիչ: — ԴԱՏԱՐԿ թուղթ 2 էջ մին յետոյ լեցուած. 75 ԼՈՒՍԱՆՑԱԶԱՐԴ. 11 ԳԼԽԱԶԱՐԴ՝ ոչ շատ լաւ: — ԳՐԻՉ՝ Աւետիք Աբեղայ:*

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ: 1. Սկիզբէն եւ վերջէն երկ'երկու թուղթ մագաղաթ՝ հին գրչագրի Ճաշոցաց. որոնց վրայ յետոյ գրուած նօտրագիր. "Ես տէր մաթոս եկայ ձեռնադրեցայ թվին ՌՃԾԹ = 1710:" եւ քանի մը տողեր:

2. Բուն գրքին սկիզբը նախաբան "Երանելոյն էպիփանու կիպրացւոյ" որմէ յետոյ առաջին գրողէն յիշատակութիւն մը. "Ո՜վ աստուածասէր սիրելի, եւ ցանկացաւղ ցանկալի եւ քան զականս պատուականի հոգւոյն սրբոյ՝ նուագելի, բաղձալի բանիցդ դաւթի, զայս իմա, զի բաղումք բարբանջեն այլ ընդ այլ. եւ այլեւայլ. զաստուածահաճոյն՝ եւ դքրիստոսազարդ սաղմոսդ. եւ զաւգանչեն թիւր ընդ թիւր, անմտութեամբ. մանաւանդ թէ անուսումնութեամբ: Եւ զի՞նչ կա նման սաղմոսիս աղէրս առ տէր. զի ահա ամենայն կեանք մեր ոմաւ աւարտի. թէ խաչ աւրհնել թէ եկեղեցի, թէ ժամահար. թէ նոր գիրք: թէ միանձն: թէ պսակ: թէ մեռելթաղ: թէ աւետաբերութիւն: թէ ամենայն քահանայագործութիւն: թէ բովանդակ անաւրինական բանք անսեռութեան որդոյն աստուծոյ. եւ ահա պատուի բանս մարգարէին դաւթի, ի հրեշտակաց. եւ ի սեառնեն հրեշտակապետաց: նա եւ ամենայն հաւատացեալք ի բերան ունին զայդ նուագդ իբրեւ զասին զիւրադիկեցուցիչ մաւր ի քիմս առնողաց: Եւ ո՞ր բերան կարէ կանգուն կացուցանել զգովասանութիւն զորին: այլ որ սոքա ի սիրուն սորուն նա միայն գիտէ զճաշակ քաղցրութեան գորոյ: բայց սաստիկ ծանեցաւ ճշգրիտ բանքդ ի ձեռն անփութութեան գրագրաց. եւ թերութեան ուսումնասիրաց: Զոր վերահասու եղեալ մեծ իմաստասէրն հայոց հոգեխառն վարդապետն սուրբ յովհաննէս՝ մականուն ասրկաւագ՝ որ գնաց ի գերահռչակ սուրբ ուխտն ի հաղբատ. եւ գտեալ ի յարկեղ սուրբ վարդապետացն, եւ թղթն. զթարգմանագիր սաղմոսարանն: եւ պարապեալ ի յայնմ աւուրս բաղումս ի լոյս եած զգանձն ծածկեալ. եւ երաց զկորցեալ աղբիւրն. եւ ցուցեալ ընդ ամենայն սահմանս... զաւրինակս զայս: եւ այդ նշմար սեւակն որ ծրի յառաջինկայդ. յայնմ աւրինակէն է հաստատուն սիրելի: Եւ զաստացաւղքս զմեզ յիշեսջիք յաղաւթս ձեր: եւս եւ զիս զաւեռիք գծողս:"

digitised by A.R.A.R.@

3· Յիշատակարանէն վերջ· "Այս Սաղմոսս մեր արդեամբք կը նուիրեմք ի յիշատակ բարեհամբաւ Սանասարեան Ազգային Դպրոցին կարնոյ Ղազարոս վահանանց Ներսէս քահանայ վահանեան կարնեցի 1 Յունվարի 1895:"

Յետոյ կը սկսի բուն գիրքը, որու մէջ քանի մը յիշատակութիւն առաջին գրողէն:

1· "Աւգնեա՛ տէր աստուած իմ յիսուս քրիստոս եւ սկսեալս զոս կատարեա զառաջիկայս եւ զիս անփորձ պահեա ի չարէն սատանայէ. — Ով սուրբ ընթերցողք՝ աղաչեմ մի ծայրատելով եւ կիսատելով յուսալով ածէք զսաղմոսս. Զի վասն այնորիկ գրեցաք զսա զի թիւր ընդ թիւր ասելն խափանեսցի: Եւ խնամով պահողքն աւրհնին յաստուծոյ ամէն:"

2· "Տէր աստուած ողորմի այնոցիկ որ ուղիղ մտաւք ողորմիս ասեն յանցաւորիս վասն զի այս յուսոյս գրեցի. հէ. (= 77) տարոյ էի յորժամ զայս գրեցի:"

3· "Յիշեցէք ի մեղաց թողութիւն եւ տէրն աստուած զձեր թողցէ ամէն:" Ասոր տակ ուրիշ մը գրչէ· "Թվին ՌՄԾԱին (= 1802) ես Ներկարար մհտի. Նիկողայոսէս այս սաղմոսարանէս կարդացի ով հանդիպի ինձ աստուած ողորմի ասէ վարձն աստուծոյ առցէ ամէն:"

4· "Փառք փրկչին յիշատակ գրչին երանի՛ քո բոլոր բերանով տացին: Եւ ինձ թողութիւն խընդրողի. զի վասն այս յուսոյս գրեցի. եւ աստուած զձեր թողու ամէն: Մի՛ մեղադրէք ամենայն ինչ սղալանաց զի հը. (= 78) տարոյ էի որ գ"րցի:" Սաղմոսներուն վերջը:

Ապէ ետք "Հաւատով խոստովանիմ." Առաքել վարդապետի "բանք սաղմոսին է պատուական:" Երգ խրատական Առաքել վարդապետի "Արեկ ասեմ բան հրաշական: զպատճառ մեղացն զանազան:" յետոյ յիշատակարան:

Ի սկզբան գովարանութիւն սաղմոսի վրայ, յետոյ՝ "Իսկ ես անարժանս եւ անպիտանս աւետիք սր"զա: ի բազում ամաց տենչմամբ տաչարեալ էի ուղղարան սաղմոսարանի: Ահա հանդիպեցաւ ընտիր աւրինակի յովաննէս գառնեցոյն, յորոյ յիշատակարան գրած էր այսպէս: Եւ գնացի առէ ի սուրբ ուխտն հաղբատ եւ երկրպագեցի սուրբ խաչին եւ սուրբ գերեզմանին մեծ եւ սքանչելի հայոց սուրբ վարդապետին յովաննիսի՝ մականուն սարկաւագ. այն որ զսաղմոսն բազում ճգամբ ի թարգմանչացն սաղմոսարանէ գաղափարեաց: Եւ իմ հանդիպեալ նոյն սաղմոսարանի սուրբ վարդապետի առեալ համբուրեցի: Եւ գրեցի զսա յիւրմէն ամենայն ստուգութեամբ: Զբանն. Զգիրն: Զհարցուկն: Զհանգիստն: Զտունն: Զկէտն: Զստորն: Արդ՝ ես ի որոց խոցեալս վասն մեղաց, աւետիք արղ. գրեցի զսա ըստ իմում կարի. թէպէտ եւ ծեր էի եւ հը. տարոյ եւ վաղուց թողեալ զարուեստս այլ իմով սկարութեամբս ուղղեցի որ նոյն աւրինակն եղեւ: Վասն որոյ համարձակ լիցին ուսանելով թէ աւրինակելով, բայց մի ոք իշխեսցէ ի հոգւոյն սրբոյ ազդմաբար բան թիւրել եւ կամ զգրեալսն ստուգել. յաւրինակէս. որպէս եւ ես. որ թէպէտ գիրս յոյժ անարուեստ է. այլ զբանն ուղղեցի կրկին եւ երեքկին: Եւ արդ գրեցաւ սա ի թուականութեանս հայոց ՋԽԴ (= 1495) ի տառապեալ լերինս հիւսիսոյ՝ ի գրուես սրբոյն գէորգեայ քաջ եւ արի զինաւորին եւ այլ սրբութեանցս որ աստ կան. եւ յառաջագրութեան սուրբ ուխտիս. յուսոյն վարդապետի. եւ մեղուցելոյս աւետիք արեղի. եւ միաբան եղբարցս. մարտիր. արեղին. եւ յովակիմ արեղին. եւ յոհաննէս արեղին. եւ խաչատուր մալաքին: Եւ զայլ միաբան սուրբ ուխտիս զուամենեցուն յիշեսջիք ի մաքուր սուրբ յաղաւթս ձեր. եւ աստուած զձեզ յիշէ ամէն: Այլ եւ յերես անկեալ աղաչեմ զհանդիպողդ՝ յիշել ի բարի զվերոյ ասացեալսդ՝ նա եւ զմեզ մեղաւ եւ զթափուրս յամենայն բարեաց զաւետիս. աղաչեմ յիշել ի տէր. եւ լի եւ առատ սրտիւ զաստուած ողորմի ասել. զի վասն այս յուսոյս գրեցի. զի թերեւս գտայց ողորմութիւն ի քրիստոսէ աստուծոյ մերոյ աղաւթիւք ձեր: Այլ աղաչեմ անմեղադիր լինել սխալանաց եւ խոշորութեան գրիս. զի յոյժ ծերացեալ էի եւ բազում ամ հեռացեալ էի ի յարուեստէ: Այլ ի միտս եկեալ գրեցի յիշատ. ինձ եւ ծնաւղաց իմոց. հաւր իմոյ վահան երեց. եւ մաւր իմոյ եմին մելքեին եւ եղբարց իմոց սիմաւոնին եւ սիր պարոնին. եւ ամենայն արեան մերձաւորաց իմոց եւ եղի յիշատակ ի դուռն սրբոյն գէորգեա զաւրավարին: Եւ արդ մի ոք իշխեսցէ հանել զսա ի դրանէ սուրբ եկեղեցւոյս յափշտակելով. կամ վաճառելով կամ փոխան առնլով. եւ գրաւ դնելով. կամ ուժբ շնորհելով: Ոչ իմ որդն եւ ոչ աւտարք: եւ ով յամառ կամ ձեռնամուխ լինի մասն եւ բաժին զուդայի մատնչի եւ զխաչահանուացն ընկալցի: Եւ որք լսեն զգիրս զայս կարելով կամ եղծանելով, կորեսցի ի կենացն յաւիտենից: փակակալք եւ սպասաւորք խնամով պահեսցեն. ոչ յարձակս ընդենլով կամ առանց դատաստանի զի մի դատեսցին ի Տեառնէ: յաւրինակ եւ յընթերցուածն մի՛ խնայեսցի: կատարողք պատուիրանիս աւրհնին յաստուծոյ եւ յամենայն սրբոց ամէն: Այլ եւ արարիչն աստուած. որ հատուցանաւղն ամենայն բարեաց հատուսցէ մեզ եւ ձեզ առատապէս ըստ ընդարձակ առատութեանն իւրոյ. աստ եւ ի հանդերձելումն ամէն ամէն:"

Ասոր կը յաջորդէ՝ "Աշխարհ ամենայն, Առաւաւտ լուսոյ. Արթունք եղերուք, արթունք եւ պատրաստք ահա գայ քո." եւն. "Աստուածածին մայր քրիստոսի. իմ յոյսն դու յաւուր մեծի. բարեխաւս ընդունելի քո. քենով ինձ ողորմի" եւն: Նոյնպէս ժամերգութիւնք ամբողջ. որոնց յետոյ դարձեալ յիշատակարան մը, "Փառք համագոյ եւ միասնական սուրբ երրորդութեանն հաւր: Գրեցաւ ձեռամբ աւետիք արղէ. ի վանս պալախաւրոյ, ի դուռս սուրբ գէորգեա զաւր." ի թվին ՋԽԴ. յիշտ. "ինձ եւ ամենայն արեան մերձաւորաց իմոց. կենդանեաց եւ հանգուցելոց. եւ այս ամենայն վասն ողորմիս ասելոյ եւ թողութիւն խնդրելոյ է. եւ որք ասեն եւ նոցա եղիցի թողութիւն յաստուծոյ ամէն:"

(Մնացեալը գալ անգամ։)

Հ. Յ. ԱՃԱՌԵԱՆ

digitised by A.R.A.R.@